ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.516342
03-03-2022թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Արմավիրի մարզպետարան*

Դիմող՝ *ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆ*
ՀՀ քաղաքացի
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0002, ԿԵՆՏՐՈՆ,*
ԱՄԻՐՅԱՆ Փ., 11, 24
anahit@prwb.am : 37477768016

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

17.02.2022թ.-ին «Աշակերտական խորհուրդների ձևավորման թափանցիկության և արդյունավետ գործունեության ուսումնասիրություն» ենթադրամաշնորհային ծրագրի ղեկավարի կողմից Ձեզ է ուղարկվել թույլտվություն և աջակցություն տրամադրելու վերաբերյալ գրություն, որի ի պատասխան ստացվել է Ձեր 22.02.2022թ.-ի 01/11.1/01068-2022 գրությունը։

Գրությամբ պահանջվել է ներկայացնել ծրագիրը և հարցազրույցների համար նախատեսված հարցաշարերը։

Սույնով ցանկանում ենք նշել, որ ծրագրի շրջանակներում անցկացվելու են ֆոկուս խմբային քննարկումներ աշակերտական խորհրդների անդամների և աշակերտական խորհրդներում չընդգրկված սովորողների հետ, ինչպես նաև խորին հարցազրույցներ ԱԽ նախագահների, տնօրենների, ԴԱԿ-ի և ՄԿԱԳ-ի հետ։

Այլ կերպ՝ ֆոկուս խմբային քննարկումները և խորին հարցազրույցները չեն ենթադրում հարցաթերթիկների լրացում և իրականացվում են զրույցի ձևաչափով։

Անդրադարձ են կատարվելու հետևյալ թեմաներին.

1. ԱԽ ձևավորումը, նախագահի ընտրությունը
2. ԱԽ գործունեությունը
3. ԱԽ իրականացրած ծրագրերը և համագործակցությունը

4. ԱԽ-ի խորհրդատվական ձայնը
5. Առկա խնդիրները. խնդիրների լուծման հաջողված պատմությունները

Սույն գրությանը կից ներկայացնում ենք ենթադրամաշնորհային ծրագրի նկարագիրը։

Ակնկալում ենք Ձեր թույլտվությունը Վաղարշապատի N 1 միջնակարգ դպրոցում, Բաղրամյանի միջնակարգ դպրոցում և Աղավնատան միջնակարգ դպրոցում հարցազրույցներ իրականացնելու համար։

Սույն գրությունը իրազեկման կարգով միաժամանակ ներկայացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն։

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար։

Կից ներկայացվում է

1. Ենթադրամաշնորհային ծրագրի նկարագիրը
2. Անահիտ Մկրտչյանի 17.02.2022թ.-ի գրության և 22.02.2022թ.-ի 01/11.1/01068-2022 պատասխան գրության պատճենը։

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՏՉՅԱՆ